

# ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ի յիշատակ հայ գրերի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի

Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Մ Է

հայերէն հրատարակութիւնների

## ՅՈՒՑԱՀԱՆԳԻՍ

բ ա ժ ի ն ա ո բ ա ժ ի ն :

Արդէն բացուեց ՌՈՒՍԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԱԺԻՆԸ, որի առթիւ կազմուեց և տպագրուում է ամբողջ Ռուսահայ մամուլի գրախօսութիւնը, նաև ցուցադրուեց Ռուսահայոց բոլոր խմբագրների խմբանկարը, տեղի ունեցան երկու դասախօսութիւն՝ Ե. Լալայեան խօսեց «Հայ գրերի և տպագրութեան կատարած դերը հայերիս մէջ», Մ. Մէտէնճեան—«Հայ պարբերական մամուլը»: Հետզհետ կը բացուին միւս բաժինները, և սրանց հետ տեղի կունենան դասախօսութիւններ և առանձնապէս կը տպուին գրախօսականներ և պատմական տեսութիւններ:

Խորհուրդս խնդրում է պ.պ. հեղինակներին, հրատարակիչներին, տպարանատէրերին և ամէն մի հայի՝ ուղարկել Ընկերութեանս հայերէն ամէն տեսակ հրատարակութիւններ, հայկական վիմատիպ պատկերներ և քարտէզներ:

Այն հրատարակութիւնները, որ կը նուիրուեն Ընկերութեանս և կամ դրամով ձեռք կը բերուեն, ցուցահանդիսից յետոյ պիտի պահուեն Ազգադրական ընկ. մասնադարանում, որ այսօրիսով դառնալու է մի մնայուն յուշարձան հայ գրերի և տպագրութեան, իսկ սոսկ ցուցադրուելու նպատակով ստացուածները կը զերադարձուին տէրերին:

Ամէն ինչ պէտք է ուղարկել այս հասցեով, Армянскому Этнографическому обществу, Тифлисъ, կամ Société Ethnographique Arménienne. (Tiflis Caucase):

Խորհրդի նախագահ՝ Ա. ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆ.

Անդամ-քարտուղար՝ Ե. ԼԱԼԱՅԵԱՆ.